ՀՈՒՆԱՍՏԱՆԻՑ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆԵՑ ՀԱՅԵՐԻ ՄԻ ՄԵԾ ԽՈՒՄԲ

Օրերս Հունաստանից Սովետական Հայաստան ժամանեց հայերի մի խումբ՝ կազմված 2.380 մարդուց։ Նրանք մի նամակով դիմել են Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմի քարտուղար ընկ. Գր. Հարությունյանին, որտեղ իրենց անսահման երախտագիտություն են հայտնում սովետական կառավարությանը, բոլշևիկների պարտիային և մեծ Ստալինին, որ հնարավորություն ստացան երկարատև պանդխտությունից, թափառումներից և վարած դժնդակ կյանքից հետո վերադառնալ իրենց հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Այդ մասին նրանք իրենց նամակում գրում են.

— Տասնյակ տարիներ թափառելով երկրից-երկիր, անտուն և անօթևան, անտեր ու անպաշտպան, հայրենիքից հեռու, հեռու մեր հարազատներից, պայքարել ենք օտարերկրյա բռնակալների դեմ և անընդհատ երազել ենք ու փափագել վերադառնալ հայրենի օջախ, հայրենի հող և ահա այսօր կատարվեց մեր տասնյակ տարիների երազը։ Այդ կատարվեց շնորհիվ ժողովուրդների իմաստուն առաջնորդ, հայ ժողովրդի բարեկամ մեծ Ստալինի հայրական հոգատարության։

Նրանք նամակը վերջացնում են ընկեր Ստալինին ուղղված ողջույնի հետևյալ խոսքերով.

— Թող երկա՜ր ու երկա՜ր ապրի ժողովուրդների հայր, հայ ժողովրդի բարեկամ մեծ Ստալին։

Նամակը Հունաստանից վերադարձած հայերի հանձնարարությամբ ստորագրել են ընկ. ընկ. Թարիսյանը, Քեռյանը, Բահրազյանը, Մարկոսյանը, Սարգիսյանը, Աղասյանը և Սեֆիրյանը։